

քաշեցին զինքը որ քարին վրայ իյնալով իր մարմինը տպաւորուեցաւ նոյն քարին վրայ եւ քարերը հրէից ամօթահարութենէն կակղանալով՝ իբր այն թէ ցաւակցութիւն կը յայտնէին կապեալ Յիսուսի համար։

Գեթսեմանիի մէջ Քրիստոսի արիւն քրտնած տեղէն քիչ մը առաջ երթալով Ձորին ուղղութեամբ, ձախ թևի ճանապարհին որ դէպի Ձիթենեաց լեռը կը տանի, կայ նոր պատով հիւսուած Ձիթենեաց պարտէզ մը ութը ձիթենիներով, որոնց բուները, ըստ աւանդութեան, Քրիստոսի ժամանակակից կը կարծուին և ըստ ռամիկներու կը կոչուին յոջոյնի ծառեր։ Այս տեղ հինէն կար Առաքեալներու անունով եկեղեցի մը (Ո. Ս. Տ. էջ 86—87)։

5. Ծաղկեալ պարսեզ (ԺԲ. դար). — Եթէ ուխտաւորները Գեթսեմանիէն Ձիթենեաց լեռը ելլել ուզեն, իսկոյն իրենց աջ կողմը կը գտնեն փոքր պատով մը շրջապատուած դաշտ մը՝ ծաղկեալ պարսեզ անունով, ուր Քրիստոս մասնուեցաւ Յուդայէն և քահանայապետին մարդոցմէ կալանաւորուեցաւ։ Հոն տակաւին կ'երևային եկեղեցիի մը (Ս. Փրկիչ) աւերակները և երկու մեծ քարեր՝ ուր Քրիստոս և Առաքեալները աշխարհը պիտի դատեն։ Ծաղկեալ դաշտը տակաւին տեղագրական էութիւն մըն է, որով ճոխացած է Կեդրոնի հովիտը։ Կարգ մը ուղեգիր ուխտաւորներու համաձայն, Գեթսեմանիի պարտէզը ԺԲ. դարու վախճանին եղած է Եզրասի Դ. Գիրքին (Գլ. Թ. 24) ծաղկանց դաշտը (P. P. V. A. հատ. Բ. էջ 315)։

6. Յիսուսի հանդերձի նշանները եւ ոսկերուն և ծուկերուն հետքերը Կեդրոնի հեղեղասին խիճերուն վրայ. — Աւանդաբար կ'ըսուի թէ մեր Տէրը բռնուե-